ԾՐԱԳԻՐ

«Գեղագիտական»/ խմբակի

2022--2023 ուսումնական տարվա համար

Խմբակավար՝ Անահիտ Պողոսյան

Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական դպրոցի գեղագիտական /դաշնամուր/ խմբակի 2022-2023թթ. ծրագրի **նպատակն է՝**

- Իրականացնել խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության գործընթացում որակյալ մանկավարժամեթոդական ծառայությունների տրամադրումը
- Նպաստել սովորողների ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնակազմակերպման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը

Խմբակում իրականացվող աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

- ճանաչողական և ուսումնական գործունեությունը
- բարոյական, գեղագիտական, հայրենասիրական երաժշտական դաստիարակությանն ուղղված ուսումնադաստիարակչական գործընթացները
- երաժշտական հմտությունների զարգացումը
- խմբակում ընդգրկված սովորողների ուսումնառության արդյունքների բարելավումը
- ուսումնառության նկատմամբ մոտիվացիայի և հետաքրքրությունների բարձրացումը, սովորելու պահանջմունքի և հմտությունների ձևավորումը
- ծրագրի նվազագույն պահանջների յուրացումը
- տնային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումն ու զարգացումը
- հաղորդակցական, համագործակցային հմտությունների զարգացումը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների ակնկալվող վերջնարդյունքները.

Սովորողը պետք է՝

- Յուրացնի իրեն հանձնարարված ուսումնական նյութը, զարգացնի սեփական ուսումնառությունը կազմակերպելու հմտությունները
- Կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ
- Դրսևորի իր երաժշտական կարողությունները շարունակաբար զարգացնելու վարքագիծ.
- Հոգատար վերաբերմունք դրսևորի պատմամշակութային ժառանգության օբյեկտների, ինչպես նաև դպրոցի գույքի, սարքավորումների հանդեպ
- Մասնակցի արտադասարանական միջոցառումների, որոնք կնպաստեն իր կրթական և մշակութային որակների զարգացմանը:

Ծրագրի համառոտ նկարագրությունը.

Ծրագիրը կազմվել է՝ թվով 11 սովորողների համար՝

- խումբ 1 / 5 երեխա/ - երկուշաբթի և չորեքշաբթի օրերին, սկսած ժամը 12:00-ից մինչև ժամը 17:00՝ 5 ժամ, յուրաքանչյուր երեխայի հետ մեկական ժամ:
- խումբ 2 / 6 երեխա / - երեքշաբթի և հինգշաբթի օրերին, սկսած ժամը 12:00-ից մինչև 18:00՝ 6 ժամ,յուրաքանչյուր երեխայի հետ մեկականն ժամ:

Հաշվի առնելով 2021-2022թթ ուսումնական տարում խմբակում ընդգրկված սովորողների ցուցաբերած արդյունքները, տարիքային խմբերը և ունակությունները, հմտությունները, նախասիրությունները՝ ծրագիրը կազմվել է բաղադրիչներից՝ օգտվելով երաժշտական համապատասխան ձեռնարկներից, այդ թվում՝ Նիկոլաևի և Թոփչյանի ձեռնարկներից, ընդգրկվել են նաև գամմատիկ վարժություններ՝ աջ և ձախ ձեռքերի համար:

Աշակերտները պատկանում են տարբեր տարիքային խմբերի՝ 7-ից մինչև 11 տարեկան:

Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր աշակերտ ստանալու և յուրացնելու է մեկական հիմնական ծրագիր և հիմնական ծրագրին կից այլ ստեղծագործություններ:

Յուրաքանչյուր սանի նկատմամբ ցուցաբերվելու է անհատական մոտեցում և կազմվելու է անհատական ծրագիր:

Հիմնական ծրագիրը բաղկացած է 4 պարտադիր տեսակի ստեղծագործություններից, այն է՝ էտյուդ, պրելյուդ/ֆուգ, սոնատ, պիես, որոնք միտված են զարգացնելու

աշակերտների՝ գործիքին տիրապետման տեխնիկական հմտությունները, երաժշտականությունը, երաժշտության ընկալումը/լսողությունը:

Հիմնական ծրագրին կից յուրաքանչյուր աշակերտ յուրացնելու է նաև այլ ստեղծագործություններ, որոնց ընտրությունը կատարվելու է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անձնական նախասիրությունները, հետաքրքրությունները և ունակությունները:

Ինչպես նաև դասաժամերի ընթացքում աշակերտներին տրվելու են գիտելիքներ երաժշտական գրականությունից և սոլֆեջիոից՝ այդպիսով իսկ խմբակն ընձեռելու է հնարավորություն ստանալու համընդհանուր երաժշտական կրթություն՝ համապատասխանելով երաժշտական կրթության ոլորտում առկա բոլոր ստանդարտներին:

Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակը ամփոփվելու է համապատասխան ամփոփիչ /ստուգողական դասով, որի ընթացքում քննվելու են յուրաքանչյուր աշակերտի՝ հաշվետու կիսամյակում ձեռք բերված գիտելիքները/հմտությունները:

Հաշվետու ուսումնական տարվա վերջում նախատեսվում է ամփոփիչ հաշվետու համերգի կազմակերպում, որի ընթացքում աշակերտները ներկայացնելու են յուրաքանչյուրը մինչև երկուական ստեղծագործություն:

Դաշնամուրի խմբակի պլան-ծրագիրը իր բաղադրիչներով ներկայացվում է ստորև՝ աղյուսակի ձևով.